ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 28-ը նոյեմբերի 2018թ.
ժամը 14⁰⁰

Մասնակցում էին՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ Հ. Մելիքյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,
ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:
***Քարտուղար՝***
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:*

**1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

(Ա. Մաղաքյան)

1.1 Քննարկելով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների** կողմից Eauction համակարգի միջոցով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն և հաշվի առնելով այն հանգամանքը, որ **«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել պատասխանատու ստորաբաժանմանը՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ հրավերի պահանջներին համապատասխանության (համարժեքության) մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով, իսկ նիստը շարունակել նշված եզրակացությունը ստանալուց հետո:

1.2 **05.12.2018թ., ժամը 14:00-ին** կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված ***մասնագիտական եզրակացությունը***՝ որոշեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

*«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի* կողմից

- ***8-րդ, 28-րդ, 39-րդ, 45-րդ և 51-րդ չափաբաժինների*** մասով ներկայացված՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ (Հավելված 3) հստակ նշված չէ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությամբ պահանջված պիտանելիության ժամկետի վերաբերյալ դրույթը:

- ընթացակարգի հրավերի ***28-րդ չափաբաժնի*** մասով նախատեսված էր, որ եռաճյուղ կաթետերի լուսանցքներից մեկը պետք է լինի **14G,** սակայն մասնակցի կողմից առաջարկվել է **16G**, ինչը սահմանափակելու է նշված կաթետերի կիրառումը՝ հնարավորություն չտալով արյան բաղադրիչների փոխներարկման իրականացումը,

- ընթացակարգի հրավերով հստակ սահմանված էր ***J ուղղորդիչ 60 սմ***, սակայն մասնակցի կողմից առաջարկվել է 50սմ, ինչը որոշ դեպքերում դժվարացնելու է կաթետերի տեղադրումը,

- հրավերով սահմանված արծաթի կամ այլ համարժեք նյութով կաթետերի պատված լինելու փաստը առաջարկված տեխնիկական բնութագրից պարզ չի՝ ոչ հստակ և անհասկանալի ձևակերպման պատճառով, միաժամանակ «անվանումը» դաշտում նշված է «Արծաթի իոնների կամ համարժեք այլ նյութի շերտով», անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի անվանումը, բացառելով կամ համարժեք արտահայտությունը,

- ***39-րդ չափաբաժնի*** մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում բացակայում է **«կոնուսաձև ծայրի»** առկայությունը, ինչը հստակ սահմանված է ընթացակարգի հրավերով,

- ***47-րդ չափաբաժնի մասով*** ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի «անվանումը» դաշտում նշված է «***Զտիչ Termovent T2 կամ համարժեք***». անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի անվանումը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը,

- ***51-րդ չափաբաժնի*** մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջված **excel 5մմ** տրոակարի հետ աշխատելու հնարավորության վերաբերյալ տեղեկությունը,

-անհրաժեշտ է **47-րդ 52-րդ, 53-րդ և 59-րդ** չափաբաժիններում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում ներառել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը:

Ընդունել ի գիտություն, որ այն չափաբաժինների մասով, որտեղ ***«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի*** կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը տարբերվում էին հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից և ներառված չեն վերը նշված անհամապատասխանությունների ցանկում, գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվել են և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից **30.11.2018թ. 19/2659** գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացությունը՝ գնահատվել են հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխանության (համարժեք):

**«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի** կողմից **67-րդ և 68-րդ** չափաբաժինների մասով ներկայացված ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 3) «անվանումը» դաշտում նշվել է **«DePuy Synthes-Mitek կամ համարժեք».** անհրաժեշտ է հստակեցնել՝ առաջարկվող ապրանքների անվանումը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը:

***«Կուրացիո» ՍՊԸ-ի կողմից 38-րդ չափաբաժնի*** մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի «տեխնիկական բնութագիրը» դաշտում նշվել է **«CH18 կամ համարժեք».** անհրաժեշտ է հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը:

***46-րդ չափաբաժնի*** մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի «տեխնիկական բնութագիրը» դաշտում նշվել է **«Blue Line կամ համարժեք».** անհրաժեշտ է հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը:

**«Մարգ ֆարմացիա» ՍՊԸ-ի** կողմից 11-րդ չափաբաժնի մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է ներառել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը:

**«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի** կողմից ընթացակարգի 66-րդ չափաբաժնի մասով ներկայացված՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ (Հավելված 3), մասնակցի կողմից առաջարկվել են երկու տարբեր ապրանքատեսակներ, միաժամանակ տեխնիկական բնութագրերում նշել են ***«կամ համարժեք»*** արտահայտությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքատեսակը՝ տեխնիկական բնութագրում բացառելով **«կամ համարժեք»** արտահայտությունը:

- անհրաժեշտ է **49-րդ, 50-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ, 60-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ, 65-րդ** և **66-րդ** չափաբաժիններում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում ներառել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացված շտկումների քննարկման վերջնաժամկետի հաջորդ օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Վ. Վահանյան |
| Գնահատող | Մ. Գալստյան |
| գնահատող | Հ. Ավետիսյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Մաղաքյան |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ(ԷԱՃ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

07 -ը դեկտեմբերի 2018թ.
ժամը $12^{00}$

Մասնակցում էին՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ Հ. Մելիքյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:

**Քարտուղար՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. ***«Մարիյա Մեդ Քո», «Ինտերմեդ Գրուպ», «Մարգ Ֆարմացիա», «ԱՐ-Մեդիկա», «Կուրացիո»*** ՍՊԸ-ների կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. «Մարիյա Մեդ Քո», «Ինտերմեդ Գրուպ», «Մարգ Ֆարմացիա», «ԱՐ-Մեդիկա», «Կուրացիո» ՍՊԸ-ների կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

1.1 **«Ինտերմեդ Գրուպ», «Մարգ Ֆարմացիա», «ԱՐ-Մեդիկա», «Կուրացիո» ՍՊԸ-ների կողմից** սահմանված ժամկետում և կարգով շտկվեցին առկա անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց վերջիններիս կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան,

1.2 Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, ***որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի*** կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չշտկվեցին (համակարգի միջոցով որևէ փաստաթուղթ չներկայացվեց): Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 8-րդ, 28-րդ, 39-րդ, 45-րդ, 47-րդ 51-րդ, 52-րդ, 53-րդ և 59-րդ չափաբաժինների մասով մերժել «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի հայտը և 8-րդ, 39-րդ, 45-րդ և 47-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ ***«Կուրացիո» ՍՊԸ-ին,*** *իսկ 51-րդ, 52-րդ, 53-րդ և 59-րդ* չափաբաժինների մասով՝ ***«ԱՐ-Մեդիկա» ՍՊԸ-ին:***

1.3 Հանձնաժողովը որոշեց ***«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի*** տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.4 Հանձնաժողովը որոշեց՝ հրապարակել նիստի արդյունքները՝ ***«Կուրացիո»*** և ***«ԱՐ-Մեդիկա»*** ՍՊԸ-ներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

1.5 Հանձնաժողովը որոշեց՝ 28-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

***1.6 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:*** *Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:*

1.7 Հիմք ընդունելով էլեկտրոնային գնահատման արդյունքները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **«Ինտերմեդ Գրուպ», «Մարգ Ֆարմացիա», «ԱՐ-Մեդիկա», «Կուրացիո» ՍՊԸ-ների կողմից** ներկայացված տեխնիկական բնութագրերը և հրավերով նախատեսված մնացած փաստաթղթերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընդունել ի գիտություն, որ 8-րդ, 39-րդ, 45-րդ և 47-րդ չափաբաժինների մասով «Կուրացիո» ՍՊԸ-ի, իսկ 51-րդ, 52-րդ, 53-րդ և 59-րդ չափաբաժինների մասով՝ «ԱՐ-Մեդիկա» ՍՊԸ-ի հաղթող ճանաչվելու հարցը կքննարկվի վերջիններիս կողմից հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

1.8 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 46-րդ, 49-րդ, 50-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ, 60-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ, 65-րդ, 66-րդ, 67-րդ, 68-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Գնահատող(ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Վ. Վահանյան

Գնահատող Մ. Գալստյան

գնահատող Հ. Ավետիսյան

Քարտուղար Ա. Մաղաքյան